

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆՈՒՄ 2011Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Կոթի համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

0. Ֆինանսների և սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում.

ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. մարտի 28-ի թիվ 05 հանձնարարականի համաձայն Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ Ժ.Խաչատրյանը մասնակցությամբ ՀՀ Տավուշի մարզի Կոթի գյուղապետ Ֆ.Մելիքյանի և գլխավոր հաշվապահ Գ.Խաչիկյանի Կոթի համայնքում իրականացրել ենք համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականության ստուգում ֆինանսների բնագավառում:

Ստուգմամբ ընդգրկվել է 2009թ. 2-րդ կիսամյակը և 2010թ հունվարից-դեկտեմբեր ամիսները ընկած ժամանակահատվածը:

Ստուգմամբ պարզվեց.

Կոթիի գյուղապետարանը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի և վերլուծության վարչության կողմից 05.02.1997թ., վկայական Բ-002822, կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի կողմից 20.01.1997թ, ՀՎՀՀ 07402195:

Կոթիի գյուղապետարանում խախտվել է 'Գանձապետական համակարգի մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 'բ' ենթակետը՝ չի ապահովել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. N934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որի պատճառով չի իրականացվել գյուղապետարանի և ենթակա կազմակերպությունների կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջների համապատասխանության, եկամուտների և ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության, ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատում:

Համայնքի 2009թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009թ. հունվարի 21-ի թիվ 1 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 28426.4 հազար դրամ, ծախսերը 29740.1 հազար դրամ, դեֆիցիտը 1313.7 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը / հավելված 1ա/: Համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի բննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը՝ խախտվել է "Հայտանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 3078.8 հազար դրամ հողի հարկի եկամուտ, որը ընթացիկ տարվա հաշվարկն է: 2009թ. 2-րդ կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 607.1 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 19.7%: Հողի հարկի ապառքը 01.01.2009թ դրությամբ կազմել է 22741.3 հազար դրամ, իսկ 01.01.2010թ դրությամբ 21801.2 հազար դրամ:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 1250.0 հազար դրամ գույքահարկի եկամուտ: 2009թ. 2-րդ կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 772.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 61.8%: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Նոյեմբերյանի համայնքների միության կողմից: Գույքահարկի ապառքը 01.01.2009թ դրությամբ կազմել է 4054.1 հազար դրամ, իսկ 01.01.2010թ դրությամբ 3955.2 հազար դրամ:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 396.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու 04.12.2008թ թիվ 20-Ն որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, որը գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: 2009թ. 2-րդ կիսամյակում փաստացի մուտքեր չկան: Տեղական տուրքերի հաշվառում չի իրականացվում:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 600.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2009թ. 2-րդ կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 226.8 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 37.8%: 2009թ համար առանց մրցույթի և նոտարական ձևակերպման 63.02 հա-ի համար կնքվել են 99 պայմանագիր: Համայնքի պառուստային հողերի ընդհանուր չափը կազմում է 340.0 հա, որից վարձակալությամբ հատկացված է 63.02 հա-ը: Խախտվել է ՀՀ կառավարության 2001թ ապրիլի 12-ի թիվ 286 որոշման պահանջները: Պահուստային հողերի վարձավճարների հաշվառում չի իրականացվում:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով Կոթի համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 21776.6 հազար դրամ: 2009թ 2-րդ եռամսյակի փաստացի ֆինանսավորումը կազմել է 10888.3 հազար դրամ, որը կիսամյակի չափաբաժինն է:

Կոթի համայնքի 2009թ. 2-րդ կիսամյակի փաստացի ծախսը կազմել է 14816.0 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 14.11.2008թ թիվ 8-Ն որոշմամբ սահմանվել է գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 8 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 13984.7 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 14159.0 հազար դրամ: 2009թ 2-րդ կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 6537.1 հազար դրամ /հավելված 2ա/: Աշխատավարձի ճշտված պլանը կազմել է 6700.7 հազար դրամ, 2-րդ կիսամյակի դրամարկղային ծախսը 3920.8 հազար դրամ: Սոցիալական ապահովության վճարների ճշտված պլանը կազմել է 1500.0 հազար դրամ, իսկ 2-րդ կիսամյակի դրամարկղային ծախսը 783.4 հազար դրամ: 2009թ փաստացի հաշվարկված աշխատավարձը և համապատասխան սոց վճարը ամբողջությամբ վճարվել է: Գյուղապետարանը աշխատողների աշխատավարձերի գծով պարտքեր չունի:

Ապարատի պահպանման ծախսերով 2009թ. 2-րդ կիսամյակի ընթացքում ձեռք բերված ծառայությունների և ապրանքների գումարը կազմել է 1401.2 հազար դրամ՝ “էներգետիկ ծառայություններ” հոդվածով 78.6 հազար դրամ, “ Կապի ծառայություններ” 312.8 հազար դրամ, “ տեղեկատվական ծառայություններ” 2.2 հազար դրամ, “գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով 51.0 հազար դրամ, ‘տրանսպորտային նյութեր’ 739.2 հազար դրամ, “կենցաղային և հանրային սննդի նյութեր” 65.0 հազար դրամ, “հատուկ նպատակային այլ նյութեր” 107.4 հազար

դրամ, “մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում” 37.0 հազար դրամ, “ընդհանուր բնույթի այլ ծառայություններ” 8.0 հազար դրամ, որոնք ձեռք են բերվել ‘Գնումների մասին’ ՀՀ օրենքի պահանջների թերություններով:

Ատուզմամբ պարզվեց, որ “Գրասենյակային նյութեր և հագուստ” և “ կենցաղային և հանրային սննդի նյութեր” հոդվածներով բացակայում են դուրս գրման ակտերը: “Տրանսպորտային նյութեր” հոդվածով բացակայում են երթուղային թերթիկները:

Աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման աշխատանքների իրականացման համար ֆիզիկական անձանց հետ կնքվել են պայամանագրեր և իրականացվել է 771.4 հազար դրամի աշխատանքներ՝ 10 տոկոս եկամտահարկը վճարվել է ՀՀ պետական բյուջե: Պայմանագրում բացակայում են կատարվելիք աշխատանքների վերաբերյալ քանակային կամ ծավալային բնութագրումները:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մանկապարտեզ ՀՈԱԿ: Մանկապարտեզի 2009թ պահպանման ծախսերը նախատեսվել է 7600.0 հազար դրամ, 2-րդ կիսամյակի փաստացի ֆինանսավորում կազմել է 3800.0 հազար դրամ: Համայնքի ավագանու 14.11.2008թ թիվ 8-Ն որոշմամբ հաստատվել է մանկապարտեզի աշխատողների թիվը և դրույքաչափերը: Մանկապարտեզի աշխատողների թիվը կազմել է 11 հոգի, երեխաների միջին տարեկան թիվը 40: Ֆինանսավորումը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի: Համայնքի ավագանու որոշմամբ 2009թ համար ծնողական վճարների չափը սահմանվել է 2000 դրամ:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մշակույթի կենտրոն ՀՈԱԿ: Մշակույթի կենտրոնի 2009թ պահպանման ծախսերը նախատեսվել է 3200.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 3500.0 հազար դրամ: 2009թ 2-րդ կիսամյակի ֆինանսավորումը կազմել է 1742.2: հազար դրամ: Համայնքի ավագանու 14.11.2008թ թիվ 8-Ն որոշմամբ հաստատվել է մշակույթի կենտրոնի աշխատողների թիվը և դրույքաչափերը՝ 6 հոգի: Ֆինանսավորումը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի:

2009թ տարեկան հաշվապահական հաշվեկշիռ չի կազմվել՝ խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ փետրվարի 4-ի թիվ 80-ն հրամանի պահանջները:

Համայնքի 2009թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատվել է համայնքի ավագանու 25.02.2010թ թիվ 6 որոշմամբ, սակայն խախտվել է “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի առաջին պարբերության պահանջները:

2009թ գյուղապետարանում և ենթակա հիմնարկներում ամենամյա գույքագրման համար ստեղծվել է հանձնաժողով, սակայն գույքագրման ցուցակները կազմվել են ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևին ոչ համապատասխան: 2009թ գույքագրման տարեկան արդյունքները ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջի համաձայն հաստատվել է համայնքի ավագանու 2010 հունվարի 19-ի թիվ 4 որոշմամբ:

‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն համայնքի ավագանու 14.11.2008թ թիվ 16 որոշմամբ հաստատվել է համայնքի ավագանու կանոնակարգը:

“Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն համայնքի ավագանու 04.12.2008թ թիվ 24 որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման ծրագիրը:

Համայնքի 2010թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2010թ. հունվարի 19-ի թիվ 1 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 32626.9 հազար դրամ, ծախսերը 35330.3 հազար դրամ, դեֆիցիտը 2703.4 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը/հավելված 1ա/: Համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի

քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը՝ խախտվել է «Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 3078.8 հազար դրամ հողի հարկի եկամուտ, որը ընթացիկ տարվա հաշվարկն է: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 1070.7 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 34.8%: Հողի հարկի ապառքը 01.01.2011թ դրությամբ կազմում է 22138.1 հազար դրամ:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 974.3 հազար դրամ գույքահարկի եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 1009.7 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 103.6%: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Նոյեմբերյանի համայնքների միության կողմից: Գույքահարկի ապառքը 01.01.2011թ դրությամբ կազմել է 1810.4 հազար դրամ:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 396.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու 30.10.2009թ թիվ 8 որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, որը գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: 2010թ. փաստացի մուտքեր չկան: Տեղական տուրքերի հաշվառում չի իրականացվում:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 600.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 225.7 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 37.6 %: 2010թ համար առանց մրցույթի և նոտարական ձևակերպման 61.02 հա-ի համար կնքվել են 93 պայմանագիր: Համայնքի պառուստային հողերի ընդհանուր չափը կազմում է 340.0 հա, որից վարձակալությամբ հատկացված է 61.02 հա-ը: Խախտվել է ՀՀ կառավարության 2001թ ապրիլի 12-ի թիվ 286 որոշման պահանջները: Պահուստային հողերի վարձավճարների հաշվառում չի իրականացվում:

ՀՀ 2010թ. պետական բյուջեով Կոթի համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 26372.8 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Կոթի համայնքի 2010թ. փաստացի ծախսը կազմել է 26009.0 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 30.11.2009թ թիվ 25-Ն որոշմամբ սահմանվել է գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 10 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 15614.8 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 15909.1 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 10411.5 հազար դրամ /հավելված 2ա/: Աշխատավարձի ճշտված պլանը կազմել է 6500.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը 6458.3 հազար դրամ: Սոցիալական ապահովության վճարների ճշտված պլանը կազմել է 1600.0 հազար դրամ, իսկ դրամարկղային ծախսը 1333.4 հազար դրամ: 2010թ փաստացի հաշվարկված աշխատավարձը և համապատասխան սոց վճարը ամբողջությամբ վճարվել է: Գյուղապետարանը աշխատողների աշխատավարձերի գծով պարտքեր չունի:

Ապարատի պահպանման ծախսերով 2010թ. ընթացքում ձեռք բերված ծառայությունների և ապրանքների գումարը կազմել է 2160.3 հազար դրամ՝ «էներգետիկ ծառայություններ» հոդվածով 175.0 հազար դրամ, «կապի ծառայություններ» 415.6 հազար դրամ, «տեղեկատվական ծառայություններ» 129.4 հազար դրամ, «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 8.0 հազար դրամ, «մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահանում» 10.0 հազար դրամ, «շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 192.0 հազար դրամ,

“ներկայացուցչական ծախսեր” 35.0 հազար դրամ, “Ապահովագրական ծախսեր” 26.0 հազար դրամ, “գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով 145.0 հազար դրամ, ‘տրանսպորտային նյութեր’ 896.4 հազար դրամ, “կենցաղային և հանրային սննդի նյութեր” 127.9 հազար դրամ, որոնք ձեռք են բերվել ‘Գնումների մասին’ ՀՀ օրենքի պահանջների թերություններով:

Ստուգմամբ պարզվեց, որ “տեղեկատվական ծառայություններ” հոդվածով բացակայում են 27.0 հազար դրամի թերթերի բաժանորդագրության պայմանագրերը, 50.4 հազար դրամի հաշիվ-ֆակտուրաները, 29.4 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունները: “Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահանում” հոդվածով բացակայում է 10.0 հազար դրամ պայմանագիրը: “Գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով բացակայում են 145.0 հազար դրամի դուրս գրման ակտերը: “Տրանսպորտային նյութեր” հոդվածով բացակայում են 800.0 հազար դրամի երթուղային թերթիկները, 96.4 հազար դրամի հաշիվ-ֆակտուրաները: “Կենցաղային և հանրային սննդի նյութեր” հոդվածով բացակայում են 71.2 հազար դրամի արձանագրությունը, հաշիվ ֆակտուրան և 127.9 հազար դրամի դուրս գրման ակտերը: “Ներկայացուցչական ծախսեր” հոդվածով բացակայում են միջոցառման անցկացման ծրագիրը և նախահաշիվը:

Սոցիալական ծրագրով 555.0 հազար դրամը ուղղվել է համայնքում իրականացված “Վարձատրվող հասարակական աշխատանքներ” ծրագրերի ներդրմանը, սակայն բացակայում է 168.0 հազար դրամի դիզ վառելիքի հանձնման-ընդունման արձանագրությունը:

Աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատման աշխատանքների իրականացման համար ֆիզիկական անձանց հետ կնքվել են պայմանագրեր և իրականացվել է 845.0 հազար դրամի աշխատանքներ՝ 10 տոկոս եկամտատահարկը վճարվել է ՀՀ պետական բյուջե: Պայմանագրում բացակայում են կատարվելիք աշխատանքների վերաբերյալ քանակային կամ ծավալային բնութագրումները:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մանակապարտեզ ՀՈԱԿ: Մանկապարտեզի 2010թ պահպանման ծախսերը նախատեսվել է 7700.0 հազար դրամ: Համայնքի ավագանու 30.10.2009թ թիվ 22-Ն որոշմամբ հաստատվել է մանկապարտեզի աշխատողների թիվը և դրույքաչափերը: Մանկապարտեզի աշխատողների թիվը կազմել է 11 հոգի, երեխաների միջին տարեկան թիվը 45: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի: Համայնքի ավագանու որոշմամբ ծնողական վճարների չափը սահմանվել է ամսական 2000 դրամ:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մշակույթի կենտրոն ՀՈԱԿ: Մշակույթի կենտրոնի 2010թ պահպանման ծախսերը նախատեսվել է 3800.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Համայնքի ավագանու 30.10.2009թ թիվ 22-Ն որոշմամբ հաստատվել է մշակույթի կենտրոնի աշխատողների թիվը և դրույքաչափերը՝ 6 հոգի: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի:

2010թ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը չի կազմվել՝ խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ փետրվարի 4-ի թիվ 80-Ն հրամանի պահանջները:

Համայնքի 2010թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջի համաձայն հաստատվել է համայնքի ավագանու 28.02.2011թ թիվ 5 որոշմամբ, սակայն խախտվել է վերոհիշյալ հոդվածի առաջին պարբերության պահանջները:

2010թ գյուղապետարանում և ենթակա հիմնարկներում ամենամյա գույքագրման համար ստեղծվել է հանձնաժողով, սակայն գույքագրման ցուցակները կազմվել են ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևին ոչ համապատասխան: 2010թ գույքագրման տարեկան արդյունքները ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջի համաձայն հաստատվել է համայնքի ավագանու 17.01.2011թ թիվ 3 որոշմամբ:

Ակտը կազմված է երկու օրինակից, բաղկացած է 12 էջից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

**0. Հողաշինության և հողօգտագործման բնագավառ.**

Կոթի համայնքի վարչական սահմաններում գտնվող սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականատերերի կողմից հողամասերն օգտագործվում են նպատակային և գործառնական նշանակության խախտումներով, ՀՀ ՀՕ-ի 43 հոդվածի 3-րդ կետ:

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

**0. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.**

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունվար - 2011 թվականի մարտ ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են, մակագրված համապատասխան աշխատողներին:

2. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

3. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրա աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին:

4. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խորականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

5. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

6. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անձանց համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

7. Սկսված է համայնքային գրքերի վարման գործընթացը, ստուգման պահին աշխատակազմի կողմից համադրման և հասցեների ճշտման աշխատանքներ էին իրականացվում ՀՀ Ոստիկանության Նոյեմբերյանի անձնագրային բաժանմունքի հետ, դրան զուգընթաց կատարվում է հասցեների ճշտում, անասնազխաքանակի հաշվառում այն հաշվով, որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով:

8. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը:

9. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հասցված վնասի չափերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով և կազմավորվել է տարբեր մասնագիտություններ ունեցող 15 հոգուց բաղկացած փրկարարական մշտական գործող ջոկատ:

#### 4. Իրավական բնագավառում.

1. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:

2. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Դրանք թելակարված, էջակալված և կնքված են պահանջվող ձևով: Գրառումներում իրավական հղումները առկա են:

3. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30 կետ 8/:

4. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը հաստատված են:

5. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:

#### 5. Քաղաքաշինության բնագավառում.

ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի և ստուգման առաջադրանքի համաձայն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք, Բաղանիս, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքների քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը արդյունավետությունը պարզաբանելու ստուգումներ:

Ստուգումներից պարզվեց որ.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի

տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

Աղավնավանք, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքներում առաջադրանքներ չեն տրվել, Բաղանիս համայնքում մշակվել և տրվել է 2 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որոնք համապատասխանում են գործող կարգին:

2. Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

Աղավնավանք, Բաղանիս, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքապետերի կողմից գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում չի կատարվել պատճառաբանելով համայնքի ֆինանսական միջոցների անբավարարությունով:

3. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքներում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքներ չեն իրականացվել, Բաղանիս համայնքում մշակվել և հաստատվել է համայնքի նոր ժամանակավոր սխեման:

4. Համայնքի ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

Աղավնավանք, Բաղանիս, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքապետերի կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքներ չի կատարվել, սակայն գերեզմանատներում կազմակերպվել են մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

5. Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման պահանջների կատարումը:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Խաշթառակ, Դիտավան համայնքներում նախագծեր չեն մշակվել, Բաղանիս համայնքում մշակվել և հաստատվել թվով 2 նախագիծ որոնք համապատասխանում են գործող կարգին:

6. Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը՝ ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Բաղանիս, Խաշթառակ, Դիտավան համայնքներում կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների չի կատարվել:

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը գործող կարգին:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Դիտավան, Կոթի, Խաշթառակ համայնքներում նախագծեր չեն մշակվել, Բաղանիս տրվել է 2 շին թույլտվություն որոնք համապատասխանում են գործող կարգին:

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության Որոշման պահանջներին:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Բաղանիս, Խաշթառակ, Դիտավան համայնքներում ավարտական ակտեր չեն ձևակերպվել:

9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը



առնչվող այլ գործընթացներ:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Բաղանիս, Խաշթառակ, Դիտավան համայնքներում ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը գործողություններ չեն կատարվել:

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

Ստուգվող ժամանակահատվածում, Աղավնավանք, Կոթի, Բաղանիս, Դիտավան, Խաշթառակ համայնքների կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ չեն ներկայացվել:

Ակտը կից ներկայացվում է:

**6. Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում.**

**ա) Գյուղատնտեսության բնագավառում**

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վ.Սուքոյանս, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Կոթի համայնքում իրականացրել են վարչական ստուգում, համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Ստուգումն իրականացվել է 2010թ. համար:

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացրել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

Գյուղապետի 24.12.2010թ. թիվ 49 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ համայնքում 2011թ. հունվարի 1-ից 17-ը անասունների համատարած հաշվառում անցկացնելու համար:

Սույն բնագավառում իրականացրել է պետությանը պատվիրակված հետևյալ լիազորությունները՝

Համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, կենդանիների հիվանդությունների կանխման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար գյուղապետի 11.01.2010թ. թիվ 5-Ա կարգադրությամբ աշխատանքային պայմանագիր է կնքվել համայնքի անասնաբույժի հետ: Նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են ժամանակին, ըստ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության իջեցրած ժամանակացույցի:

Համայնքի տարածքում մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար, գյուղապետի 15.11.2010թ. թիվ 44 կարգադրությամբ ստեղծվել է համայնքային հանձնաժողով: Պայքարի աշխատանքները կատարվել են ժամանակին՝ ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության իջեցրած հրահանգի:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացրել է հետևյալ կամավոր լիազորությունը.

- աջակցել է տոհմային և սերմնաբուժական աշխատանքներին:

Ստուգման արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդակցական և գործնական բնույթի օգնություն:

բ) Բնապահպանության բնագավառում

«Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Ս.Գևորգյանս, հիմք ընդունելով «Ֆոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը և «Տավուշի մարզպետի 2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը՝ Տավուշի մարզի Կոթի համայնքում իրականացրել են վարչական հսկողություն, համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Նախքան վարչական հսկողության իրականացումը, համայնքի ղեկավարը սահմանված կարգով նախապես տեղեկացվել է, իսկ հանդիպման օրը նրան է հանձնվել Տավուշի մարզպետի 22.02.2011թ. թիվ 7-Ա կարգադրությունը, միաժամանակ բացատրվել է վարչական հսկողության առնչությամբ իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների, պարտադիր և պատվիրակված լիազորությունների մասին, ինչպես նաև արդյունքների բողոքարկման և գանգատարկման կարգը:

Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը՝ Անտոնների /համայնքի վարչական սահմանում կա 392.26 հա անտառ, այդ թվում փշատերև, արհեստական անտառտարածքներ/, պահպանման նպատակով համայնքի շուրջ 60 մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին նոր տարվա նախօրեին համայնքի բյուջեի միջոցներով գնել է 1.5 մետրանոց արհեստական տոնաձառներ՝ հնարավոր ծառահատումները /տոնաձառների/ կանխելու նպատակով: Այդ նախաձեռնությունը արդեն ավանդույթ է դարձել, որը շարունակական է համայնքի համար:

«Բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ տվյալներ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն «Կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և «Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:

Շրջակա միջավայրի և սանիտարական վիճակի պահպանության բնագավառում իրականացնում է հետևյալ միջոցառումները.

ա/ 2010թ. հունվար ամսին 4 անձնավորությունների կնքվել է Կոթի համայնքի սանմաքրման աշխատանքների պայմանագրեր, որոնց վրա դրված է Կոթի համայնքի փողոցների սանմաքրման աշխատանքները, որոնք համայնքի բյուջեի միջոցներից վարձատրվում են 10-15 հազարական դրամ աշխատավարձ:

բ/ Կոթի համայնքի ղեկավարի 05.04.2010թ. թիվ 05 կարգադրությամբ, ղեկավարվելով «Տավուշի մարզպետի 2010թ. մարտի 23-ի թիվ 9-Ա կարգադրության պահանջներով, Կոթի համայնքի տարածքում սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման միամսյակի աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որը իրագործել է նախօրոք կազմված աշխատանքների իրականացման ծրագիրը:

գ/ 01.03.2010թ. կնքվել է պայմանագիր Կոթի գյուղի բնակիչ Աշոտ Մարտիրոսի Սեփիանյանի հետ սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարելու Կոթի բնակավայրի կանաչապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով, պատվիրատուն աշխատանքները ընդունելուց հետո վճարում է համապատասխան գումար:

դ/ Համայնքում իրականացվում է աղբահանություն, 19.01.2010թ. կնքվել է պայմանագիր գյուղապետարանի և Կոթի գյուղի բնակիչ Հայկ Ռոստոմի Զանվեյանի հետ, որը իր անձնական բեռնատար ավտոմեքենայով սահմանված կարգով նախատեսված ծավալներով, ձևով և

ժամկետներում պետք է կատարի Կոթի բնակավայրի աղբահանության աշխատանքները: Ըստ պայմանագրի, պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ աշխատանքները և վճարել 1 տարվա համար 180 000 դրամ:

ե/ Համայնքի նախաձեռնությամբ, մարզպետի աջակցությամբ 2010թ. դեկտեմբեր ամսին <<Կանաչագարդ երկիր>> ՀԿ-ից անվճար ձեռք է բերվել 275 հատ Տույա տեսակի ծառերի տնկիներ, աճեցնելու և համայնքի կանաչապատ տարածքները ավելացնելու նպատակով: Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:










- Համայնքի ղեկավարը իրականացրել է պատվիրակված հետևյալ լիազորությունը՝  
ա/ 2010թ. 2-րդ եռամսյակում <<Հասարակական աշխատանքներ>> ծրագրով իրականացրել է ջրատարների սանիտարական վիճակի բարելավման աշխատանքներ 57 մարդ/օր ծավալով, ծախսվել է 136.8 հազ. դրամ

բ/ Ջրային ռեսուրսների ուսցիոնալ օգտագործման նպատակով գյուղապետարանի միջնորդությամբ և <<Կարմիր խաչ>>-ի օժանդակությամբ բարելավվել է համայնքի 3 ջրավազանների սանիտարական վիճակը, մաքրվել է կապտաժները, փոխարինվել և վերանորոգվել են ջրի փականները:

գ/ <<Վորլդ Վիժն>> կազմակերպության միջոցներով իրականացրել է գյուղ մտնող մայրուղու երկայնքով մառատունկ, տնկվել է 100 ծառ:

- Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:

Ժ.ԽԱԶԱՏՐՅԱՆ	
Ֆ. ՄԵԼԻՔՅԱՆ	
Գ.ԽԱԶԻԿՅԱՆ	
Ս. ՂՈՒՇՉՅԱՆ	
Ա. ՄԱՐԴԱՆՅԱՆ	
Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ	
Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ	
Վ.ՍՈՒՔՈՅԱՆ	
Հ. ՎԱՐՇԱՄՅԱՆ	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆՈՒՄ 2011Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 21.02.2011թ. 01/15/927-11 գրության համաձայն Տավուշի մարզի Խաշթառակ համայնքում իրականացվել է վարչական հսկողություն՝ բացառապես համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է.

1. Ֆինանսների և սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում.

ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. մարտի 23-ի թիվ 04 հանձնարարականի համաձայն Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ Ժ.Խաչատրյանը մասնակցությամբ ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակի գյուղապետ Հ.Քամայանի և գլխավոր հաշվապահ Ա.Վիրաբյանի Խաշթառակ համայնքում իրականացրել ենք համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականության ստուգում ֆինանսների բնագավառում:

Ստուգմամբ ընդգրկվել է 2009թ. և 2010թ հունվարից-դեկտեմբեր ամիսները, ընկած ժամանակահատվածը:

Ստուգմամբ պարզվեց.

Խաշթառակի գյուղապետարանը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի և վերլուծության վարչության կողմից 03.02.1997թ., վկայական Բ-002711, կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի կողմից 06.01.1997թ, ՀՎՀՀ 07600912:

Խաշթառակի գյուղապետարանում խախտվել է 'Գանձապետական համակարգի մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 'բ' ենթակետը՝ չի ապահովել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. N934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որի պատճառով չի իրականացվել գյուղապետարանի և ենթակա կազմակերպությունների կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջների համապատասխանության, եկամուտների և ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության, ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատում:

Համայնքի 2009թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009թ. փետրվարի 12-ի թիվ 7 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 22056.7 հազար դրամ, ծախսերը 22565.1 հազար դրամ, դեֆիցիտը 508.4 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը / հավելված 1ա/: Համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը՝ խախտվել է "Հայտանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 3569.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ, որը ընթացիկ տարվա հաշվարկն է: 2009թ. փաստացի կատարողականը կազմել է 2019.4 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 56.6 %: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվառման և վճարումների ընդունման կազմակերպման կարգը: Գյուղապետարանի կողմից խախտվել է վերոհիշյալ որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, ամփոփագրերում բացակայում են հարկ վճարողների ստորագրությունները: Հողի հարկի ապառքը 01.01.2009թ դրությամբ կազմել է 19748.0 հազար դրամ, իսկ 01.01.2010թ դրությամբ 10717.7 հազար դրամ:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 1456.7 հազար դրամ գույքահարկի եկամուտ: 2009թ. փաստացի կատարողականը կազմել է 928.6 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 63.7%: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Իջևանի համայնքների միության կողմից: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվառման և վճարումների ընդունման կազմակերպման կարգը: Գյուղապետարանի կողմից խախտվել է վերոհիշյալ որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերի պահանջները, ամփոփագրերում բացակայում են հարկ վճարողների ստորագրությունները: Գույքահարկի ապառքը 01.01.2010թ դրությամբ կազմել է 7515.9 հազար դրամ:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 48.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու 08.01.2009թ թիվ 1 որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, որը գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: 2009թ. փաստացի կատարողականը կազմել է 20.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 42.7%: Տեղական տուրքերի հաշվառում չի իրականացվում:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով տեղական վճարներից եկամուտ չի նախատեսվել: 2009թ փաստացի մուտքը կազմել է 20.5 հազար դրամ, որը մրցույթների մասնակցության վճար է:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 518.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2009թ. փաստացի կատարողականը կազմել է 298.9 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 57.7%: 2009թ համար նոտարական ձևակերպմամբ կնքված են 4 պայմանագիր, որոնց վարձավճարի հանրագումարը կազմում է 392.3 հազար դրամ: Համայնքի պահուստային հողերի ընդհանուր չափը կազմում է 34.18 հա, որից վարձակալությամբ հատկացված է 18.5 հա-ը:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսվել է 419.0 հազար դրամ համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարից եկամուտ: 2009թ. փաստացի կատարողականը կազմել է 59.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 14.1%: Կնքված են տարածքի վարձակալության 4 պայմանագիր, որոնք ունեն նոտարական ձևակերպում:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով այլ տրանսֆերտների մուտքերի չի նախատեսվել: Համայնքի ավագանու 06.05.2009թ թիվ 19 որոշմամբ բյուջեում կատարվել է համապատասխան փոփոխություն: Հայաստան համահայկական հիմնադրամի կողմից տրամադրված 765.0 հազար դրամը հատկացվել է համայնքի 3 ընտանիքների՝ անասուն ձեռք բերելու նպատակով:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով օտարումից փաստացի մուտքը կազմել է 367.5 հազար դրամ: Համայնքի ավագանու 04.04.2009թ թիվ 13 որոշմամբ օտարվել է 2 կտոր հողամաս, յուրաքանչյուրը 1.3 հա: Ըստ նոտարական պայմանագրերի հողերի ընդհանուր արժեքը կազմում է 385.0 հազար դրամ, սակայն 17.5 հազար դրամ կանխավճարը մուտքագրվել է համայնքի տեղական վճարների գանձապետական հաշվեհամարին:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով Խաշթառակ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 15386.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Խաշթառակ համայնքի 2009թ. փաստացի ծախսը կազմել է 19840.0 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 12.02.2009թ թիվ 6 որոշմամբ սահմանվել է գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 12 հոգի: Համայնքի ավագանու 06.05.2009թ թիվ 21 որոշմամբ սահմանվել է նոր դրույքաչափերը և կառուցվածքը: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 13284.4 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 13474.4 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 12016.1 հազար դրամ /հավելված 2ա/: Աշխատավարձի ճշտված պլանը կազմել է 8323.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը 8323.0 հազար դրամ: Սոցիալական ապահովության վճարների ճշտված պլանը կազմել է 1686.3 հազար դրամ, իսկ դրամարկղային ծախսը 1686.3 հազար դրամ: 2009թ փաստացի հաշվարկված աշխատավարձը և համապատասխան սոց վճարը ամբողջությամբ վճարվել է: Գյուղապետարանը աշխատողների աշխատավարձերի գծով պարտքեր չունի:

Ապարատի պահպանման ծախսերով 2009թ. ընթացքում ձեռք բերված ծառայությունների և ապրանքների գումարը կազմել է 1527.7 հազար դրամ՝ “էներգետիկ ծառայություններ” հոդվածով 234.4 հազար դրամ, “ Կապի ծառայություններ” 79.3 հազար դրամ, “աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ” 36.0 հազար դրամ, “գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով 178.0 հազար դրամ, ‘տրանսպորտային նյութեր’ 800.0 հազար դրամ, “ներկայացուցչական ծախսեր” 200.0 հազար դրամ, որոնք ձեռք են բերվել առանց ‘Գնումների մասին’ ՀՀ օրենքի պահանջների կիրառման:

Ստուգմամբ պարզվեց, որ “ կապի ծառայություններ” հոդվածով բացակայում է 43.2 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունները: “էներգետիկ ծառայություններ” հոդվածով բացակայում են 15.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունը: “Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ” հոդվածով բացակայում է 36.0 հազար դրամի հաշիվ ֆակտուրան: “Գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով բացակայում են 60.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունը և 145.0 հազար դրամի դուրս գրման ակտերը: “Ներկայացուցչական ծախսեր” հոդվածով 200.0 հազար դրամն ուղղվել է միջոցառման իրականացմանը, սակայն բացակայում են միջոցառման անցկացման ծրագիրը և նախահաշիվը: “Տրանսպորտային նյութեր” հոդվածով բացակայում են 100.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունը և 50.0 հազար դրամի հաշիվ-ֆակտուրան, ինչպես նաև երթուղային թերթիկներով բենզինի ծախսը չի համապատասխանում ձեռք բերված բենզինի քանակին:

“Ներքին գործուղումներ” հոդվածով 2009թ ծախսը կազմել է 309.1 հազար դրամ, սակայն վճարումները կատարվել են ՀՀ կառավարության 2008թ հոկտեմբերի 16-ի թիվ 1243-Ն որոշման պահանջների խախտմամբ:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով պահուստային ֆոնդը նախատեսվել է 1235.7 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշումների համաձայն պահուստային ֆոնդից հատկացումները կազմել է 521.1 հազար դրամ, որից 100.0 հազար դրամ ապարատի սոց վճարին, 82.8 հազար դրամ տեղեկատվական ծառայություններին, 9.75 հազար դրամը ընդհանուր բնույթի այլ ծառայություններին, 67.5 հազար դրամ տրանսպորտային նյութերին, 226.0 հազար դրամը հատուկ նպատակային այլ նյութերին և 35.0 հազար դրամը մշակույթի ծրագրին:

Ստուգմամբ պարզվեց, որ “հատուկ նպատակային այլ նյութեր” հողվածով բացակայում է 60.0 հազար դրամի նյութի ձեռք բերման պայմանագիրը և հանձնման-ընդունման արձանագրությունը, 166.0 հազար դրամն ուղղվել է միջոցառումների նվերների ձեռք բերմանը, սակայն բացակայում են միջոցառումների անցկացման ծրագրերը և նախահաշիվները:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով նախատեսված բոլոր ծրագրերով գնումները կատարվել են առանց <Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջների կիրառման:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մանակապարտեզ ՀՈԱԿ: Մանկապարտեզի 2009թ պահպանման ծախսերը նախատեսվել է 3589.0 հազար դրամ, փաստացի ֆինանսավորում կազմել է 3489.3 հազար դրամ: Համայնքի ավագանու 12.02.2009թ թիվ 6 որոշմամբ հաստատվել է մանկապարտեզի աշխատողների թիվը և դրույքաչափերը: Մանկապարտեզի աշխատողների թիվը կազմել է 6 հոգի, երեխաների միջին տարեկան թիվը 18: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի: Համայնքի ավագանու կողմից 2009թ համար ծնողական վճարների չափը չկա հաստատված:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մշակույթի տուն ՀՈԱԿ: Մշակույթի տան 2009թ պահպանման ծախսերը նախատեսվել է 2146.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 2256.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Համայնքի ավագանու 12.02.2009թ թիվ 6 որոշմամբ հաստատվել է մշակույթի տան աշխատողների թիվը և դրույքաչափերը՝ 4 հոգի: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի:

2009թ տարեկան հաշվապահական հաշվեկշիռ չի կազմվել՝ խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ փետրվարի 4-ի թիվ 80-ն հրամանի պահանջները:

Համայնքի 2009թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը՝ խախտվել է “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջները:

2009թ գյուղապետարանում և ենթակա հիմնարկներում ամենամյա գույքագրման համար ստեղծվել է հանձնաժողով, սակայն չեն կազմվել հանձնաժողովի կողմից հաստատված գույքագրման ցուցակ: 2009թ գույքագրման տարեկան արդյունքները չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը՝ խախտվել է ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:

‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն համայնքի ավագանու 27.10.2007թ թիվ 8/19-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ավագանու կանոնակարգը:

“Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն համայնքի ավագանու կողմից չկա հաստատված համայնքի զարգացման ծրագիրը:

Համայնքի 2010թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 11-ի թիվ 34 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 25806.5 հազար դրամ, ծախսերը 26174.0 հազար դրամ, դեֆիցիտը 367.5 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը: Համայնքի 2010թ. տեղական ճշտված բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2010թ. հունվարի 19-ի թիվ 1 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 25812.6 հազար դրամ, ծախսերը 26189.2 հազար դրամ, դեֆիցիտը 376.6 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը /հավելված 1ա/:

Համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը՝ խախտվել է “Հայտանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 3559.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ, որը ընթացիկ տարվա հաշվարկն է: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 1183.4 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 33.3%: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվառման և վճարումների ընդունման կազմակերպման կարգը: Գյուղապետարանի կողմից խախտվել է վերոհիշյալ որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, ամփոփագրերում բացակայում են հարկ վճարողների ստորագրությունները: Հողի հարկի ապառքը 01.01.2011թ դրությամբ կազմում է 19951.0 հազար դրամ:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 1028.3 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որը ընթացիկ տարվա հաշվարկն է: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 585.8 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 128.9%: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Նոյեմբերյանի համայնքների միության կողմից: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվառման և վճարումների ընդունման կազմակերպման կարգը: Գյուղապետարանի կողմից խախտվել է վերոհիշյալ որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերի պահանջները, ամփոփագրերում բացակայում են հարկ վճարողների ստորագրությունները: Գույքահարկի ապառքը 01.01.2011թ դրությամբ կազմել է 7515.9 հազար դրամ:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 48.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ/ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություն/: Համայնքի ավագանու 02.12.2009թ թիվ 29 որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, որը գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 67.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 140.0%, որը ամբողջությամբ այլ արտաքին գովազդների համար վճարված տուրքն է: Համայնքի ավագանու վերոհիշյալ որոշմամբ այլ արտաքին գովազդների համար տեղական տուրքերի դրույքաչափեր չի սահմանվել:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 518.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 526.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 101.6 %: 2010թ համար նոտարական ձևակերպմամբ կնքված են 4 պայմանագիր, որոնց վարձավճարի հանրագումարը կազմում է 392.3 հազար դրամ: Համայնքի պառտատային հողերի ընդհանուր չափը կազմում է 34.18 հա, որից վարձակալությամբ հատկացված է 18.5 հա-ը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 122.2 հազար դրամ համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարից եկամուտ: 2010թ. փաստացի մուտքեր չկան: Կնքված են տարածքի վարձակալության 3 պայմանագիր, որոնք ունեն նոտարական ձևակերպում:

ՀՀ 2010թ. պետական բյուջեով հաշթառակ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 19753.1 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Խաշթառակ համայնքի 2010թ. փաստացի ծախսը կազմել է 23466.4 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 11.12.2009թ թիվ 32 որոշմամբ սահմանվել է գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 13 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 16160.0 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են



փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 15737.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 13803.3 հազար դրամ /հավելված 2ա/: Աշխատավարձի ճշտված պլանը կազմել է 10230.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը 9704.9 հազար դրամ: Սոցիալական ապահովության վճարների ճշտված պլանը կազմել է 2145.0 հազար դրամ, իսկ դրամարկղային ծախսը 1856.0 հազար դրամ: 2010թ փաստացի հաշվարկված աշխատավարձը և համապատասխան սոց վճարը ամբողջությամբ վճարվել է: Գյուղապետարանը աշխատողների աշխատավարձերի գծով պարտքեր չունի:

Ապարատի պահպանման ծախսերով 2010թ. ընթացքում ձեռք բերված ծառայությունների և ապրանքների գումարը կազմել է 1840.9 հազար դրամ՝ “էներգետիկ ծառայություններ” հոդվածով 224.9 հազար դրամ, “ Ապահովագրական ծախսեր” 26.0 հազար դրամ, “աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ” 36.0 հազար դրամ, “գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով 145.0 հազար դրամ, ‘տրանսպորտային նյութեր’ 900.0 հազար դրամ, “ընդհանուր բնույթի այլ ծառայություններ” 409.0 հազար դրամ, “ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահանում” 100.0 հազար դրամ, որոնք ձեռք են բերվել առանց ‘Գնումների մասին’ ՀՀ օրենքի պահանջների կիրառման:

Ստուգմամբ պարզվեց, որ “էներգետիկ ծառայություններ” հոդվածով բացակայում են 40.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունները, “գրասենյակային նյութեր և հագուստ” հոդվածով բացակայում են 145.0 հազար դրամի դուրս գրման ակտերը: “Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ” հոդվածով բացակայում են 36.0 հազար դրամ հաշիվ-ֆակտուրաները: “Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ” հոդվածով բացակայում է 409.0 հազար դրամի միջոցառումների անցկացման ծրագրերը և նախահաշիվները, “տրանսպորտային նյութեր” հոդվածով երթուղային թերթիկներով բենզինի ծախսը չի համապատասխանում ձեռք բերված բենզինի քանակին:

“Ներքին գործուղումներ” հոդվածով 2010թ ծախսը կազմել է 200.0 հազար դրամ, սակայն վճարումները կատարվել են ՀՀ կառավարության 2008թ հոկտեմբերի 16-ի թիվ 1243-Ն որոշման պահանջների խախտմամբ:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով պահուստային ֆոնդը նախատեսվել է 1142.6 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշումների համաձայ պահուստային ֆոնդից հատկացումները կազմել է 1056.5 հազար դրամ, որից 35.0 հազար դրամ համակարգչային ծառայություններին, 45.5 հազար դրամ տեղեկատվական ծառայություններին, 109.75 հազար դրամը ընդհանուր բնույթի այլ ծառայություններին, 66.3 մասնագիտական ծառայություններ հոդվածին, 375.9 հազար դրամ տրանսպորտային նյութերին, 224.0 հազար դրամը հատուկ նպատակային այլ նյութերին և 200.0 հազար դրամը նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին:

Ստուգմամբ պարզվեց, որ “համակարգչային ծառայություններ” հոդվածով բացակայում է 35.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունը: “Տեղեկատվական ծառայություններ” հոդվածով բացակայում են 2.5 հազար դրամի հաշիվը և 43.0 հազար դրամի հանձնման-ընդունման արձանագրությունները: “Հատուկ նպատակային այլ նյութեր” հոդվածով բացակայում է 49.0 հազար դրամի նյութի ձեռք բերման պայմանագիրը և հանձնման-ընդունման արձանագրությունը, որը համայնքի ավագանու 22.03.2010թ թիվ 15 որոշմամբ ուղղվել է Վորլդ Վիժն կազմակերպության կողմից իրականացվող “Մանկապարտեզի խմելու և կոյուղու ջրագծերի ու խոհանոցի վերանորոգում” ծրագրի ներդրմանը: “Տրանսպորտային նյութեր” հոդվածով 375.9 հազար դրամը և “հատուկ նպատակային այլ նյութեր” հոդվածով 133.0 հազար դրամն ուղղվել է վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրի ներդրմանը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսված բոլոր ծրագրերով գնումները կատարվել են առանց <Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջների կիրառման:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մանկապարտեզ, ՀՈԱԿ: Մանկապարտեզի 2010թ պահպանման ծախսերը նախատեսվել է 3900.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 4003.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Համայնքի ավագանու 11.12.2009թ թիվ 32 որոշմամբ հաստատվել է մանկապարտեզի աշխատողների թիվը և դրույքաչափերը: Մանկապարտեզի աշխատողների թիվը կազմել է 6 հոգի, երեխաների միջին տարեկան թիվը 22: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի: Համայնքի ավագանու 11.12.2009թ թիվ 33 որոշմամբ ծնողական վճարների չափը սահմանվել է ամսական 1500 դրամ:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մեկ մշակույթի տուն ՀՈԱԿ: Մշակույթի տան 2010թ պահպանման ծախսերը նախատեսվել է 2950.0 հազար դրամ: 2010թ փաստացի ֆինանսավորումը կազմել է 2740.0 հազար դրամ: Համայնքի ավագանու 11.12.2009թ թիվ 32 որոշմամբ հաստատվել է մշակույթի տան աշխատողների թիվը և դրույքաչափերը՝ 5 հոգի: Ֆինանսավորմը կատարվել է ըստ հաստատված նախահաշվի և ժամանակացույցի:

2010թ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը չի կազմվել՝ խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ փետրվարի 4-ի թիվ 80-ն հրամանի պահանջները:

Համայնքի 2010թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը՝ խախտվել է “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջները:

2010թ գյուղապետարանում և ենթակա հիմնարկներում ամենամյա գույքագրման համար ստեղծվել է հանձնաժողով, սակայն չեն կազմվել հանձնաժողովի կողմից հաստատված գույքագրման ցուցակ: 2010թ գույքագրման տարեկան արդյունքները չի ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը՝ խախտվել է ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:

Ակտը կազմված է երկու օրինակից, բաղկացած է 14 էջից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

## 2. Հողաշինության և հողօգտագործման բնագավառ.

Չեն պահպանվել Խաշթառակ համայնքի վարչական սահմաններում գտնվող սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի սանմանանիշերը, խախտվել է ՀՀ ՀՕ-ի 43 հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Ընդհանուր առմամբ վերը նշված համայնքում հողաշինության և հողօգտագործման բնագավառում աշխատանքներն իրականացվում են ՀՀ ՀՕ-ի 56-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

## 3. ՏԻ և ՀԳՄ հարցերի բնագավառում.

Ստուգումն ընդգրկել է 2010 թվականի հունվար – 2011 թվականի մարտ ամիսները: Ստուգմամբ արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են, սակայն պայմանանիշերը երբեմն բացակայում են:

2. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից: